01/10.5/5169-09

2009-07-31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ։

«Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել, հաշվի առնելով, որ «հանցագործության դեպքի վայրը» և «հատուկ պահպանվող վայրերը» հատուկ ռեժիմի վայրեր են և այդ վայրեր լրագրողը կարող է այցելել միայն հատուկ թույլտվության դեպքում։ Հիշյալ վայրեր այցելելը կարող է նաև արգելվել՝ ելնելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից կամ նկատի ունենալով տվյալ քրեական գործի առանձնահատկությունները։ Այդ առումով նախագծում անհրաժեշտ է լրացնել նոր հոդված՝ նախատեսելով «հանցա-

գործությունների և հատուկ պահպանության վայրերի» այցելության առանձնահատկությունները։ Բացի դրանից, նշված կետն անհրաժեշտ է խմբագրել «դատավարություններին մասնակցելու» մասով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն «Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել»։

Նույն հոդվածի 4-րդ և 14-րդ կետերն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով, որ դրանցով նախատեսված հարաբերությունները հստակ կարգավորված են նշված հոդվածի 15-րդ կետով, ուստի և նախագծով կատարվում է նույնաբովանդակ դրույթների անհարկի կրկնություն և ներքին հակասություն, մինչդեռ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները։

Բացի դրանից, անհրաժեշտ է հաշվի առնել, որ նշված հոդվածի 4-րդ և 14-րդ կետերը չեն բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Բանկային գաղտնիքի մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներից, քանի որ չեն նախատեսում բացառություն պետական և ծառայողական, անձնական և բանկային գաղտնիք պարունակող և մարդու անձնական կյանքին վերաբերող փաստաթղթերի համար։ Միաժամանակ, նույն կետից անհրաժեշտ է հանել «ստանալ դրանք կամ դրանց պատճենները» բառերը, քանի որ մեր կարծիքով լրագրողները չեն կարող ստանալ պաշտոնական փաստաթղթերը, այլ կարող են միայն ծանոթանալ դրանց և անհրաժեշտության դեպքում կատարել դրանց

պատճենահանում իրենց միջոցների հաշվին։ Նույն նկատառումով անհրաժեշտ է խմբագրել նաև նույն հոդվածի 15-րդ կետը։

Խմբագրման կարիք ունի նաև նույն հոդվածի 11-րդ կետը, քանի որ մեր կարծիքով լրագրողը կարող է այցելել կուսակցություններ, տեղական ինքնակառավարման կամ պետական կառավարման և այլ մարմիններ միայն նախօրոք պայմանավորվածության և համաձայնության դեպքում։ Նույն դիտողությունը վերաբերում է նաև 13-րդ և 16-րդ կետերին։

2. Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված 4.3-րդ հոդվածն ամբողջությամբ անընդունելի է, քանի որ դրանով նախատեսված «թաքնված գրառման» գործառույթները «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հանդիսանում են պետական լիազոր մարմնի հատուկ գործառույթներ, որոնք իրականացվում են հատուկ թույլտվության դեպքում և չեն կարող իրականացվել լրագրողների կողմից։

Հաշվի առնելով նշվածը հայտնում ենք, որ ներկայացված նախագիծն առկա խմբագրությամբ անընդունելի է, քանի որ դրա դրույթները հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «Բանկային գաղտնիքի մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին։

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել «կամ լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովմանն այլ կերպ խոչընդոտելը» բառերը, քանի որ նախ՝ հիշյալ դրույթը չի բխում «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի

պահանջներից, որոնցով հստակ սահմանված են բոլոր արգելքները, և բացի դրանից կարող է առաջացնել հիշյալ հոդվածի տարաբնույթ մեկնաբանումներ և տարակարծություններ, քանի որ պարզ չէ, թե որոնք են այլ կերպ խոչընդոտելու դեպքերը։

Միաժամանակ, հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները նախագծի 1-ին հոդվածում «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով։

2. Լուրջ հիմնավորման կարիք ունի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածով նախատեսված սանկցիաների խստացումը։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ
Պ-623-14.05.2009, 06.07.2009-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին

***Հոդված** 1.* «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ ՀՕ-14-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6)-րդ ենթակետով «6) լրատվության միջոցի տարածմանը (բաժանորդագրություն, առաքում, իրացում) խոչընդոտելը»։

***Հոդված** 2.* Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1, 4.2, եւ 4.3 հոդվածներով՝

1) *Հոդված 4.1. Լրագրողի իրավունքները*

Լրագրողը օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

1. փնտրել, հավաքել, ստանալ պատրաստել, խմբագրել եւ տարածել տեղեկատվություն,

2. իր մասնագիտական օրինական գործնեությունն իրականացնելիս լրագրողի վկայականով այցելել տարերրային եւ այլ աղետների, վթարների, արտակարգ իրավիճակ հայտարարված վայրեր, արգելանոցներ, զնագվածային անկարգությունների ու քաղաքացիների զանգվածային կուտակումների հատուկ պահպանվող վայրեր, հանցագործության դեպքի վայր, դատավարությունների, հատուկ թույլտվությամբ՝ հատուկ պահպանության վայրեր, անարգել մուտք եւ ելք ունենալ ձերբակալվածներին պահելու վայր եւ կալանավորվածներին պահելու վայր ու պատիժը կատարելու վայր, ինչպես նաեւ ներկա գտնվել ժողովների, հանրահավաքների, երթերի, ցույցերի եւ այլ հավաքների,

3. կատարել գրառումներ՝ այդ թվում տեսագրության, ձայնագրության, պատճենահանման, լուսանկարման եւ նկարահանման միջոցների օգտագործմամբ,

4. պատճենահանել, կրկնօրինակել, հրատարակել, հրապարակել կամ այլ կերպ վերարտադրել փաստաթղթեր եւ նյութեր,

5. հրաժարվել իր ստորագրությամբ նյութ կամ հրապարակում պատրաստելուց, եթե այն չի համապատասխանում իր համոզմունքներին,

6. հրաժարվել խմբագրության կամ խմբագրի կողմից իրեն տված այն հանձնարարություններից, որոնց բնույթը կամ կատարումը կարող է առաջացնել օրենքի խախտում,

7. հրաժարվել իր գրած հոդվածը կամ պատրաստած նյութը հրապարակելուց, եթե դրանց բովանդակությունը, աղավաղված է խմբագրի (խմբագրակազմի, խմբագրական խորհրդի եւ այլն) կողմից,

8. ճշտել իրեն տրված տեղեկատվության հավաստիությունը,

9. շարադրել իր անձնական դատողությունները, գնահատականները, մեկնաբանությունները եւ նկատառումները այն նյութերում կամ հրապարակումներում, որոնք պետք է տարածվեն իր ստորագրությամբ,

10. իր գրած հոդվածը կամ պատրաստած նյութը հրապարակել (տարածել) սեփական ստորագրությամբ, կեղծանունով կամ առանց ստորագրության,

11. տեղեկատվություն ստանալու նպատակով այցելել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, կուսակցություններ, կազմակերպություններ, հիմնարկներ կամ դրանց լրատվական ծառայություններ,

12. հարցազրույց վարել քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց հետ,

13. տեղեկատվություն ստանալու կապակցությամբ կամ իր հարցումներին համապատասխան ընդունելություն ստանալ պաշտոնատար անձանց կողմից,

14. ծանոթանալ պաշտոնական փաստաթղթերին ու նյութերին եւ իրենց միջոցների հաշվին ստանալ դրանց պատճենները,

15. ստանալ պետական, ծառայողական, առեւտրային, բանկային կամ օրենքով սահմանված այլ գաղտնիք չպարունակող, մարդու անձնական կյանքին չվերաբերող փաստաթղթեր եւ նյութեր, դրանցից կատարել քաղվածքներ եւ պատճեններ,

16. լուսանկարել, նկարահանել, տեսագրել եւ ձայնագրել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, կուսակցություններում, կազմակերպություններում, հիմնարկներում, բաց տարածությունում եւ հասարակական վայրերում,

17. իրականացնել օրենքով սահմանված այլ լիազորություններ։

Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների պահանջով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, հիմնարկները, կազմակերպությունները, կուսակցությունները, կազմակերպությունները եւ դրանց պաշտոնատար անձիք պարտավոր են նրանց տրամադրել համապատասխան տեղեկատվություն՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի։ Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են տեղեկատվություն ստանալ նաեւ քաղաքացիներից։

2) *Հոդված 4.2. Լրագրողի պարտականությունները*

Լրագրողը իր մասնագիտական օրինական գործունեությունն իրականացնելիս պարտավոր է՝

1. հարգել այլոց իրավունքները, օրինական շահերը, պատիվը, արժանապատվությունն ու բարի համբավը, չհրապարակել (չտարածել) դրանք արատավորող լուրեր ու տեղեկություններ,

2. իրավասու մարմնի կամ անձի առաջին, իսկ պահանջի դեպքում ներկայացնել լրագրողի վկայականը կամ անձը եւ լրագրողի լիազորությունները հավաստող այլ փաստաթուղթ,

3. չհրապարակել պատերազմի, ռասիզմի, բռնության, ազգային եւ կրոնական թշնամանքի, թմրամոլության, մարմնավաճառության եւ քրեորեն հետապնդելի այլ արարքների քարոզչություն պարունակող նյութեր,

4. չհրապարակել կեղծ տեղեկատվություն, չաղավաղել քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց հետ վարած հարցազրույցների բովանդակությունը,

5. լրատվության միջոցի խմբագրին տեղեկացնել չստուգված փաստերի (տեղեկությունների) մասին, որոնց հրապարակումը (տարածումը) կարող է խախտել սույն օրենքի պահանջները,

6. տեղեկություններ հաղորդած անձանց պահանջով նշել այդ տեղեկության աղբյուրը եւ մեջբերման հեղինակին, կամ պահպանել տեղեկությունների եւ դրանց աղբյուրի գաղտնիությունը,

7. քաղաքացիներից կամ պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալիս նրանց նախապես զգուշացնել ձայնագրության, տեսագրության, լուսանկարման եւ նկարահանման մասին, բացառությամբ սույն օրենքի 4.3 հոդվածով նախատեսված դեպքերի։

3) *Հոդված 4.3 Թաքնված գրառում*

Տեղեկությունների եւ նյութերի ձեռքբերումը թաքնված ձայնագրության, տեսագրության, լուսանկարման եւ նկարահանման օգտագործմամբ թույլատրվում է եթե, առկա է հետեւյալ հանգամանքներից որեւիցե մեկը՝

1) դա չի խախտում մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները,

2) եթե դա անհրաժեշտ է հասարակական շահերը պաշտպանելու համար եւ ձեռնարկված են համապատասխան միջոցներ կողմնակի անձանց հնարավոր նույնականացումը կանխելու համար,

3) եթե գրառման ցուցադրումը կատարվում է դատարանի որոշմամբ։

***Հոդված** 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

***Հոդված** 1.* «Հայաստանի Հանրապետության 2003թ. ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 164-րդ հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«Հոդված 164. Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովմանը խոչընդոտելը

Գրաքննությունը կամ որեւէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի եւ լրագրողի նկատմամբ կամ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ խտրականությունը լրատվության համար անհրաժեշտ սարքավորումների եւ նյութերի քաղաքացիական շրջանառությունում կամ ցանկացած, այդ թվում՝ այլ երկրներում թողարկված եւ տարածված լրատվության միջոցներից օգտվելու՝ անձի իրավունքի սահմանափակումը կամ լրատվության միջոցի տարածմանը որեւէ ձեւով խոչընդոտելը կամ լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովմանը այլ կերպ խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհայուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով։

Նույն արարքները, որոնք կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնական դիրքն օգտագործելով՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»։

***Հոդված** 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տաներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ

Սույն օրինագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է լրագրողների իրավունքների, պարտականությունների եւ պաշտպանվածության հիմնահարցերը կանոնակարգելու անհրաժեշտությամբ։ Օրինագիծը նախապատրաստելիս օգտագործվել են մի շարք

երկրների՝ այդ թվում Ռուսաստանի Դաշնության, Լատվիայի եւ Վրաստանի համապատասխան օրենքների դրույթները։

Օրինագծի մշակմանը մասնակցել են Մամուլի ազգային ակումբի, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ներկայացուցիչները, ինչպես նաեւ իմ օգնականներ՝ Արմենուհի Սաղաթելյանը եւ Երվանդ Դալլաքյանը։

Օրնագծերի փաթեթը 2009 թվականի մարտի 26-ին համապատասխան եզրակացություններ ստանալու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է թվով 45 ԶԼՄ-ների (ցանկը կցվում է), որոնցից առ 13.05.2009 թ. առաջարկություններ եւ դիտողություններ են ստացվել միայն «Ազատամտություն» եւ «Հայք» թերթերից, ինչպես նաեւ «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ից։ Դրանք հաշվի են առնվել օրինագծի մշակման ընթացքում։

Օրինագիծը լրամշակվել է կառավարության 18.06.2009թ. եզրակացության մեջ նշված առաջարկությունների եւ դիտողությունների հիման վրա։ Կառավարության ներկայացրած 16 առաջարկություններից ընդունվել է 13-ը, իսկ չընդունված 3 առաջարկությունների վերաբերյալ տրվում են ներքոհիշյալ պարզաբանումները։

Վերոհիշյալ եզրակացության մեջ նշված օրինագծի հոդված 4.1-ի 3-րդ կետի (տես լրամշակված տարբերակի 2-րդ կետը) վերաբերյալ առաջարկություններն ընդունելի կլինեին, եթե այդ հոդվածի սկզբում նշված չլիներ, որ «Լրագրողը օրենքով սահմանված կարգով իրավունք ունի» ձեւակերպումը։ Բացի այդ, «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 7-րդ ենթակետից հետո ամրագրված մասը, ինչպես նաեւ «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի» 22-րդ հոդվածի 2.1 կետի դրույթները, որոնց հիման վրա օրինագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ, թերեւս փարատում են բոլոր մտահոգությունները։ Առավել եւս, որ վերհիշյալ օրինագծերում ամրագրված մուտքի եւ ելքի կարգը սահմանում է պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը։ Կառավարության եզրակացության մեջ օրինագծի հոդված 4.1-ի 13-րդ եւ 15-րդ կետերին (տես լրամշակված տարբերակի 11-րդ եւ 13-րդ կետերը) վերաբերող առաջարկությունների ընդունումը մեր կարծիքով կարող է սահմանափակել լրագրողի իրավունքները։ Բացի այդ, հոդվածի սկզբում նշված է «Լրագրողն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի», որը թերեւս լուծում է հարցը։ Ի դեպ Ռուսաստանի Դաշնության «Զանգվածային լրատվության միջոցների մասին» օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերում ամրագրված է մեր կողմից ընդունված մոտեցումը։ Կառավարության եզրակացության մեջ նշված օրինագծի 4.3 հոդվածը հանելու վերաբերյալ առաջարկությունը չի ընդունվել, որովհետեւ մեր կարծիքով դա չի հակասում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածին։ Ի դեպ օրինագծի «Թաքնված գրառում» վերնագրված 4.3 հոդվածով նախատեսված դրույթները ամբողջությամբ կրկնում են Ռուսաստանի Դաշնության վերոհիշյալ օրենքի 50-րդ հոդվածը։ Ինչ վերաբերվում է Քրեական օրենսգրքում առաջարկվող փոփոխությանը, ապա դա կատարվել է ելնելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի դրույթներից, ինչպես նաեւ լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովմանը խոչընդոտելու համար պատասխանատվությունը մեծացնելու անհրաժեշտությունից։ Այդ հարցում եւս հաշվի են առնվել կառավարության առաջարկությունները։